

բժշկելը ջրգողուածին, իսկ ներքեինը՝ ներկայացնումէ Յիսուսի բժշկելը մերկանգամ՝ դիւահարին, Աննորօնի ձախ կողմի կտորի վերին մասում եղած քանդակը ներկայացնումէ Յիսուս աւագակների հետ խաչը ուսին Գողգոթայ բարձրանալիս, իսկ վարի մասնում՝ եղածը՝ ներկայացնումէ Յիսուս՝ գերգեսացի դիւահարներին բժշկելիս:

Բ. երեսին Յիսուսի պատկերները քանդակուած են ձեռքին խաչ.

Թէ քանդակագործ պատկերները և թէ նկարները չունին արդի պահանջմանը համեմատ նրբութիւն, բայց հնութեամբ՝ անգնահատելի են: Աւետարանը գրողի և գնողի յիշատակարաններից երևումէ որ գրուել է ոմն Յովհաննէս գրչի ձեռքով Տեառն Ստեփաննոսի անունով Հայոց ՆԼԸ, Հոռոմոց ՉԽԸ և Իսմայէլական բնակալութեան ՅՀԹ. թուականին, Գնուել է և տրուել յիշատակ Ս. Ստեփաննոս նախավկայի վանքին Հայոց ՈՒԲ. թուականին Աթաբակ Ալտկղի տէրութեան և Գրիգորոյ Հայրութեան ժամանակ Վահրամայ որդի Գուրծիի ձեռքով:

Յ. Վ. Մ.

Ս. Թաղէոս և Բարդուղիմէոս առաքելոց տօնին՝ ձեմարանում կարգացուած ճառք:

ԱՐԺԱՆԵԱՊԱՏԻՒ Ս. ՀԱՐՔ, ՅԱՐԳՈՒՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
ԵՒ ՍԻՐԵԼԻ ԵՂԱՐԱՅՐՆԵՐ.

Մարդկային բնաւորութեան վերայ դիւցազնի քաջագործութեան ազդեցութիւնը խիստ մեծ է, մանաւանդ այն տեսակ դիւցազների, որոնք Հայրենեաց նահատակ, թշուառի պաշտպան, բնկածի կանգնեցնող մականուն են կրում: Մարդս յափշտակվումէ դոցանով. բուն ցանկութիւն է զգում դոցա դարում՝ ապրած և դոցա փառաց հաղորդ գտնուած լինել: Այս մի ուրիշ կարգ ևս դիւցազների, և դոքա փսեմ գաղափարների դիւցազներն են, որոնք ճշմարտութեան դրօշակը բռնած՝ հաւատոյ զէնքերով զինվումեն ամբողջ աշխարհների դէմ, և ամենահզօր մարդիկը խոնարհում են նոցա առաջ: զգում են իրանց մարդկային տկարութիւնը, համոզվում են վերջապէս թէ՛ այդ տկար արարածների մէջ կայ մի գերբնական ոյժ՝ որ զօրաւոր է ամեն երկրաւոր ուժից, որ նախանձելի է բոլոր երկրաւոր փառքերից: Աւերջին այդ դիւցազները հաւատոյ Առաքեալներն են, որոնց առաջնորդն ինքն իսկ Մեսեայն էր:

Հայաստանեայց Եկեղեցին կատարումէ այսօր երկու Առաքեալ դիւցազների իւր առաջին Լուսաւորիչների տօնը. և մենք ևս իբրև Հայաստանեայց եկեղեցւոյ զաւակներ՝ այս հանդիսովը պատուումենք

նոցա յիշատակը, յիշելով նոցա գործունէութիւնը, արած բարիքը և նահատակութիւնը, Սահայն թող ներուի ինձ այսօր այս հանդիսի առթիւ գարձնել Ձեր ուշադրութիւնը քրիստոնէութիւնից առաջ Հին աշխարհի անկեալ վիճակի վերայ, յիշել թէ ինչ է Քրիստոնէութիւնը և ինչպէս մարդկութեան ընդհանուր կրօն գարձաւ, և ապա դառնալ դէպի մեր հայրենիքը յերևան հանելու նորա վիճակն ևս, յիշատակելով Քրիստոնէութեան մուտքը Հայաստան, Առաքելոց քարոզութեան եղանակը և մեր առաջին Լուսաւորիչների քարոզութիւնը, Յանդուգն է թէ և իմ այս մտադրութիւնը, սակայն Ձեր ներողամտութիւնը ինձ քաջալերում է:

Հին աշխարհը Քրիստոնէութիւնից առաջ մեռելութեան վիճակին էր հասել, մօտեցել էր նա արձակելու հոգեվարքի վերջին շունչը. կրօնը իւր բարոյականութեամբ ընկնելով՝ ընկել էր և մարդկութիւնը. նա մի մեքենայ էր դարձել, որը շրջում էր պտուտակներով, և նորա անառաջնորդ քայլերը ուղղուած էին դէպի կորուստ, Յունական և Հռոմէական պերճութիւնները, շոսյլ կեանքը, տիրում էին գրեթէ ամեն տեղ: Ստորին կրքերն էին թագաւորում, առաքինութիւնը վերցուել էր աշխարհից, խոնարհութիւնն ու հեղութիւնը յիմարութիւն էին համարվում. թագաւորում էր հպարտութիւնը, թշուառ անպատասպարան էր, աղքատը՝ հալածուած: Իշխանութիւնները զեղծ վիճակի մէջ էին գտնվում. արդարութիւնն ու ճշմարտութիւնը չունէին իրանց պաշտպան. մեծամեծների բարոյական սնունդը փառասիրութիւնն էր. հասարակական կեանքի կապերը խզուած էին. իւրաքանչիւր ազգ ամբողջական առանձնութիւն չէր կազմում, որովհետև միացնող յօդը — կրօնը թուլացած էր, Պղատոնի և Սոկրատի բարոյական վարդապետութիւնը թէև բազմաստուածութեանը տուել էր վերջին հարուածը, սակայն անկարող էր գտնուել ազգերի և ժողովուրդների միութեան կապ դառնալ, ներշնչուած և հանձարաւոր շատ մարդիկ վաղուց գուշակել էին թէ՛ մարդկային միտքն ու հոգին անկումից վերականգնելու համար, նորա բարոյական վիճակը վերածնելու համար բաւական չէ մարդկային զօր, մի Աստուած պէտք է իջնէ երկնքից, որպէս զի անառաջնորդէ մարդուն դուրս գալ այս ընդհանուր ապականութեան միջից, Այդ Աստուածը ահա խոստացեալ Մեսսայն էր, որ իւր երկնքից բերած երկնային Վարդապետութեամբը յիմարութեանց և ապականութեանց խառն վիճակից մի նոր աշխարհ ստեղծեց, Հին ժողովրդից՝ մի նոր ժողովուրդ կազմեց, Հին մարդուց մի նոր մարդ ծնաւ:

Քրիստոնէութիւնից առաջ եղել են բազմատեսակ կրօններ, որոնք զանազան ազգերի մէջ սկիզբն են առել, զարգացել և մեռել. սակայն այդ կրօնները ծագելով երկրի բնութիւնից, — բնութեան զաղտնիքները բացատրելու հակումից, կեանքի ընթացքից, — մարդկութեան համար ընդհանուր նշանակութիւն չեն ունեցել: Նոցա կրօնական օրհներգու-

Թիւնները ընդհանուր ազգաց մեհնանների կամ տաճարների մեջ չեն երգուել, որովհետեւ հնդիկի զգացումը այլ է, նա այլ է աղօթում, Հայն այլ, Պարսիկն այլ. նոցա բարոյականութեան օրէնքներն ընդհանուր ազգերի կենաց կանոն չեն դարձել, որովհետեւ ազգերի կեանքը տարբեր են, տարբեր հօրիզոնի տակ. իւրաքանչիւր ազգի առաքեալն և օրէնըսողերն իւր ազգի բարուց և պիտոյից համար է օրէնսդրել, Այդ կրօնների մէջ գերագոյնը դարձեալ Մովսիսականն էր. սակայն ընդհանուր կրօն լինելու համար նա էլ ունէր իւր պակասութիւնները. Յիսուս Քրիստոս լրացրեց Մովսիսականը, և Քրիստոնէական կրօնը համայն աշխարհի կրօն դարձրեց. նորա բարոյական վարդապետութիւնները միմիայն Հայու և Յոյնի համար չեն, այլ ընդհանուր մարդկութեան համար. Չրադաշար Մեդացուց, Պիթագորաս Յունաց օրէնսդիրներն եղան. իսկ Միաձին Բաւն՝ ընդհանուր մարդկութեան առաքեալն և օրէնսդիրը:

Քրիստոս մկրտութիւնից և փորձութիւնից յետոյ սկսեց իւր երկնաւոր վարդապետութիւնը, որ միակ կատարելութեան աղբիւր է. նորա վարդապետութեանց սկիզբն է Սէր, սէր առ Աստուած և առ ընկերս, որից աղբերանումն բոլոր առաքինութիւնները. — « Սիրեսցես զՏէր » Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, յամենայն անձնէ քումմէ և « յամենայն մտաց քոց. նման նմին սիրեսցես զընկերն քո իբրև զանձն » քո: « Նա լրացրեց Մովսիսի տասնաբանեայ օրէնքն, այսինքն հրամայեց ոչ միայն չըլնալ, չըգողանալ, սուտ չըվկայել, այլ արմատախիլ արեց նոցա բուն պատճառը. ցամաքեցրեց այն աղբիւրը՝ որից ծագում էին այդ մեղքերը, « Պատուիր քո հօրն ու մօրը, » ասաց նա, և ոչ թէ Չրադաշարի կամ այլոց նման, « ծնօղներին չըպատուողն մահուան դատապարտեց. » որովհետեւ Աստուածորդին Յիսուս Քրիստոս գիտէր թէ՛ ուր սէր կայ, այնտեղ ատելութիւն չի լինիլ. Ինչ որ կամենու մես որ մարդիկ քեզ անեն, նոյնը և դու նոցա արա՛. — Սիրի՛ր թշնամի ներիդ, Սոքա այնպիսի բարոյական պատուէրներ են, որ անձնաւորութիւնից յառաջացած ամեն բան պարունակում են իրանց մէջ. որովհետեւ մենք կամենում ենք որ ուրիշը մեզ չըհայհոյէ, մեզ չարիք չըհասցնէ, նեղութեան մէջ օգնէ և լին. մենք ևս նոյնը պէտքէ անենք ուրիշներին. Քրիստոնէութեան կատարելութիւնը ահա այս է իսկապէս, նա խլումէ չարեաց արմատը, և բարոյականինը տնկում արգասաւոր հողի մէջ որպէս զի աճի, ուռճանայ, անհետացնէ մոլի կրքերը, առաջնորդէ դէպի բարոյականութիւն, մտքը իւր գործքերովն աստուածանայ և իւր կատարելութեամբը Հօր Աստուծոյ նմանի. որովհետեւ երկնային Վարդապետի ըզձերից մին ևս այս էր. « Եղբուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է »: Նա սահման և կանոն զրեց մարդկային մտաց, հոգւոյն և մարմնին. որոշեց նոցա պէտքերը, քարոզեց այն սկզբունքները, որոնցից ծնվում է հասարակական և ընտանեկան կեանքը. օրինադրեց ամուսնութիւն-

նք, որպէս զի մարդկային ազգը երկիրը և նորա վայելչութիւնը յազգէ ազգ ժառանգէ. քարոզեց ժուժկալութիւն և շափաւորութիւն, սովորեցրեց ապրել երկրիս վրայ իրրև կատարեալ մարդ, երկնքի և յաւիտեանականութեան համար. Հաստատեց Ակեղեցին, կարգեց նորա համար պաշտօնեաներ, իւր անձովը ցոյց տալով թէ ճշմարիտ և քաջ հովիւր ի՞նչպէս պէտքէ որոշուի վարձկանիցը, որով և հոգևորականութեան հիմն դրեց Քրիստոնէական Ակեղեցւոյ մէջ. նա շքմերժեց օրինաւոր իշխանութեան հպատակելն, այլ տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ, պատուիրեց. Ինքն կատարեալ հայրենասիրութեան օրինակ հանդիսացաւ ասելով. «Այ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի». — «Երթայք առաւել առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի». — Յակորայ որդւոց համար եմ եկել. առաւել նորա կորսուած ոչխարներն պիտի որոնեմ դանելու. և վերջապէս իւր քարոզած վարդապետութեան համար, որոնք ճշմարտութիւն էին իսկովին, խաչը ուսին Գողգոթայ ելաւ ճշմարտութեան նահատակ դառնալու, և խաչի վերայ իւր թշնամիների համար ազօթելով աւանդեց իւր հոգին. — խղիւով մարդկութեան մահուան կապանքները և տալով անձնազոհութեան գաղափար՝ — ճշմարտութեան համար աներկիւղ մեռնել.

Ահա այս և այսպիսի էր նորա բարոյականը անձամբ առնելով և ստուցանելով. այսպիսով մարդս երկրորդ անգամ ստացաւ Աստուծոց իւր հաւատոյ և բարոց օրինագիրքն՝ Աւետարանը. ուր միանգամայն պատկերացած կայ երկինքն ու երկիրը. մահկանացուն այստեղ թէ՛ զբռնում իւր միխթարութիւնը, սա է նորա ցաւերի սփոփիչը. ճշմարիտ աղքատը չի յուսահատում, երբ աշխարհի թշուառութեան կուլ է գնում. նորան չեն շլացնում հրապուրիչ պերճութիւնները՝ երբ աչքերը ընկնու մեն հոգի վերայ, Քրիստոնէութիւնը փոխեց աշխարհիս պատկերը. նորա ազգեցութեան տակ կեանքը, բանաստեղծութիւնը, գեղարուեստները և մարդը ուրիշ կերպարանք առան. աշխարհը յօժարութեամբ զրկեց նորան. որովհետև նա պարզ էր և դիւրամտեցիւ պաշտելի՝ իւր խորհուրդներովը, հետաքրքիր՝ իւր պատմութեամբը, երկնային՝ իւր բարոյականութեամբը, պայծառ՝ իւր յոյսերով, նորա զրախտը լուսոյ վայր է, արգարոյ երջանկութիւնը լոյսն է, ուր նա ոչինչ չունի, բայց ամեն բան ունի.

Գտնանք գէպի մեր հայրենիքը և տեսնենք նորա վիճակը. — Քրիստոնէութեան առաջին դարերում հեթանոսական կրօնական գաղափարները Հայոց մէջ ևս օրհասական վիճակի մէջ էին գտնվում, հեթանոս հայերի համար անցել էին այն ժամանակները, երբ նոցա երևակայութեան և քմբոնման առաջ Արամազդը ներկայանում էր իրրև մի իմաստուն էակ, արարիչ երկնի և երկրի. Անահիտը իրրև ծնունդ Արամազդայ, մայր ամենայն զգաստութեան. Ահազգն իրրև վիշապաբաղ՝ քա-

ջութեան տիպար, նորա կորցրել էին իւրեանց ոյժը՝ Հայուն միութեան կազմով կապելու։ Հայը անտարրեր աչքով էր նայում իւր աստուածների վերայ, առանց նոցանից ոչինչ սպասելու։ Գորան նպաստեց ի հարկէ ժամանակը և հրէական տարրն, — որ հայոց մէջ Արշակունեաց ժամանակ բարձր զիրք էր ստացել և շատ անգամ նահատակներն ու իրիկ իւր հայրենի կրօնի համար ի զարմանս հեծանոս Հայուն, — Միաստուածութեան սկզբունքը Հայաստանի մէջ արմատանալու առաջին սկզբնապատճառը եղաւ։ Ըստ պատմութեան, Ս. Թադէոս Առաքեալը Նդեպեայում։ Տրգատը թէև Հայերին իրանց հայրենական բազմաստուածութեան մէջ հաստատուն պահելու համար միմեանց ետեից երկու հրովարտակներ գրեց, ուր քրիստոնեաներին հուր և սուր սպառնալով՝ հրաւիրում էր Հայերին հաստատ մնալ իրանց նախնական կրօնի մէջ, կարծելով թէ իբրև թագաւոր՝ իւր հրամաններն անշուշտ մարդկային սրտի վրայ կ'ազդեն, կ'աւելացնեն սէր, զգացմունք, կարծելով թէ հին կրօնովն հայն կրվերածնուի և Արամազդայ ու ոսկեծին Անահատի մեհեաներն կըստանան իրանց փառքը, բայց արքայի հրովարտակները ի դուր և ապարդիւն մնացին Հայերից ոմունք հասկացել էին որ Անահատը այլ ևս խաղաղութիւն ու շինութիւն բերող չէր, անհրաժեշտ էր մի ուրիշ-կրօն, և այդ Քրիստոնէութիւնն եղաւ։ Իսկ վերածնութեան առաջնորդներ գարձան Ս. Թադէոս և Ս. Բարդուղիմէոս առաքեալները, որոնց տօնը երախտագէտ սրտով տօնում ենք այսօր։

Ինչպէս սկզբումն ևս յիշեցի, նպատակ չունենալով պատմել թէ ի՞նչպէս Քրիստոնէութիւնը մտաւ Հայաստան, որ բոլորիս ծանօթ է, ես անցնում եմ յիշատակելու առաքելոց քարոզութեան եղանակը և Ս. Թադէոսի ու Ս. Բարդուղիմէոսի քարոզութիւնը Հայաստանում։

Քրիստոնէութեան առաջին առաքեալներն երկնքից ուսած և ներշնչուած մարդիկ էին, նորա գիտէին թափանցել մարդու հոգւոյ մէջ, գիտէին թէ՛ ի՞նչ է նշանակում փոխել համոզմունքը թէև զա յողորդի և թուլացած, ուստի իրենց քարոզութեան եղանակի մէջ ևս խոհեմ զիրք էին բռնում համոզելու, ի զարծ բերելու սիրով և ոչ սրով ու բռնութեամբ, որը հակառակ է բոլորովին Քրիստոնէութեան սկզբունքին։ — Ս. Թադէոսը այդ եղանակովն է քարոզում։ — Խօսում է նա արաբագործութեան մասին, ուր Նհովան երևում է մի ամենակարող, աննիւթ էակ, բնութեան և սրտի վերայ իշխող, քարոզում է նորա աստուածային զերբնական յատկութիւնները, որով կառավարվում է տիեզերքը կամ թէ սկիզբն առնելով Մեսայի յաշխարհ գալուց, և խօսելով նորա նպատակի մասին՝ քարոզում է նորա աստուածային հրաշքները, վարդապետութիւնը, շարչարանքը, մահը, Յարութիւնը ևլն. և այնուհետև կարծես պատրաստելով ժողովրդի անպատրաստ միտքը խօսել է սկսում ձեռագործ աստուածներին վերայ, գերբնականովն ստորինն մեր-

ժելով, քարոզումէ Հեթանոս Հայերին և ստում. Չիր պաշտածները արարած են. Մի նմանիք առաջին դարերի մարդկանց իստասրտութեանը, որոնց համար ծագած չըլինելով ստուածային լոյսը, մեռան իաւարի մէջ, Պարձէք Հեթանոսական ստուածիւնից դէպի Ճշմարիտ և սողոգ կեանքը. «Ո՞ է այն նարոգ կուռք արարեալ, որում երկիր պաղանէք. Ո՞ է Բէլդ, զոր պատուէք. — Փողոզուրդը անտարակոյս ուրախութեամբ պիտի գրկէր այդպիսի քարոզուած կրօնը. — Պարձնելով նոցա Քրիստոնէութեան գիրկը, աւանդումէ բարւոք կենցաղաւարութեան պատուէրներ. նախանձաւոր լինել կրօնին և Եկեղեցւոյն, հաւատոյ գաղտնեացը քննող չլինել. — Թէ Ս. Թաղէոսն իւր քարոզութեամբը ի՞նչքան մեծ ազդեցութիւն գործեց առ հասարակ թագաւորի և ժողովրդի վերայ, այդ երևումէ նորա վերջին հրատեղտիցը՝ ուր Արգար խուռն բազմութեամբ ճանապարհ է ձգում նորան մեծ սգով. «Մինչև քուրմք անգամ նարուայ և Բէլայ պատուէին և մեծարէին զնոս», աւելացնումէ պատմագիրն, Ս. Թաղէոսի արած այդ մեծ ազդեցութիւնը բացատրումէ նորանով, որ նա քարոզումէր մի պարզ, գիւրըմբռնելի և կեցուցիչ վարդապետութիւն, իսկ առաւել ազդողը Առաքելոց վարմունքն էր, որով նոքա արդարեւ դիւցազնների պատկեր էին կրում ըստ արտաքին և ներքին բարեմասնութեանց: Ահա Աերուրնայի նկարագրութիւնը այդ մասին — «Գնացք նոցա էին վայելչութեամբ առաջի տեսողաց իւրեանց, և վարք նոցա գովութեամբ զարդարեալ էին յարաքնոց. պատուականք էին տեսլեամբք և համարձակ բանիւք և Ճշմարիտ խօսիւք և ազատ բարդիւք, և ընդ լծով ագահութեան ոչ հնազանդէին և ընդ մեղադրութեամբ ոչ անկանէին և ընդ երկիւղի ոչ փակէին. Ս. Թաղէոս առաքեալ յաջորդ Եղեսիայուամն Ազդէին թողլով, ինքն Արգարի հրովարտակովը գնաց դէպի հիւս. արեւելք Արտազ գաւառը իւր առաքելութեան պաշտօնը շարունակելու. Սանատրուկ որ ի յարգանս Արգարու ընդունել էր քրիստոնէութիւն, նորա մահից յետոյ դարձեալ կռապաշտութեան դիմելով՝ նահատակումէ Ս. Թաղէոս առաքեալին՝ որի առաքելութեան գործը շարունակումէ Ս. Բարգուղիմէոս Լեր, Զարեանդ և Գողթան գաւառներում, և Սանատրկի քոյր Ոգուհւոյն քրիստոնեայ դարձնելով՝ նահատակումէ Արեքանոս քաղաքումը: Այսպէս այս երկու անձնաւորութիւնները թե թեի տուած՝ Հայոց դեռ կորդ սրտերի մէջ սերմանումեն Աւետարանի վարդապետութեան սերմը, որով և իրաւամբ առաջին Լուսաւորիչ կոչուեցին:

Բայց ի՞նչ ենք տեսնում. Հայիրը որքան շուտով ընդգրկեցին Քրիստոնէութիւնը, այնքան էլ շուտով թողին. այդ բնական էր. Պարերով Հեթանոսութեան օրէնքներով կռաւարկող և անկարգ կեանքի սովոր ժողովուրդը յանկարծ մի գերբնական օրէնքով և կրօնով սահմանափակել, որի պատուէրներիցն էին և ժ ու ժ կ ա լ ու թ ի ու ն ու

չ ա փ ա լ ո Ր ո լ թ ի լ ն ը , անհնարին էր , մանաւանդ պալատական դասի համար . ուստի Արգարի մահից յետոյ ըստ երևութիւն վերանու մէ Գրիտոնէութիւնը , բացվում են դարձեալ մեհնանների դռները և Արամազդը կարծես պէտքէ յաղթանակէր , բայց ոչ , Քրիստոսի եկեղեցին հէնց սկզբից ցոյց տուեց թէ ինքն անյաղթմահարելի է դժոխքի դռներիցը . Յիրաւի , Քրիստոնէութիւնը Արգարի ժամանակ չըզարձաւ ընդհանրական կրօն , բայց նորա մահից յետոյ չըզադարեց բոլորովին . նորա լոյսը անշէջ մնաց Հայաստանում , մինչև երկրորդ Լուսաւորիչ Պարթևն Ս . Գրիգոր . — Քրիստոնէութիւնը մաքառելով կուսպաշտութեան դէմ , ունեցաւ այդ ժամանակամիջոցում իւր նահապետները , Շաւարշանի Շուշան , նազելի արքայադստրիկն Սանդուխտ Շաւարշանի դաշառումն իւր երկնաւոր Փետայի համար նահատակուելով կարմիր վարդ է դառնում . Ոսկեանք և Սուքիասեանք , որոնք Ծաղկեայ և Զրարաշխի լեռների մէջ անքուն զուարթնոց նման օրհնաբանու մէին անմահ Արարչին՝ նոյնպէս նահատակութեան պսակին արժանացան , այսպէս և այլք . Առաջին քրիստոնեայք լեռների անձաներում՝ ճգնելով՝ չըթողին որ քրիստոնէութեան առկայծեալ ճրագը շիջանի մինչև որ Ս . Գրիգոր Լուսաւորիչ և մեծն Տրդատ այդ առկայծեալ պարոյզից բորբոքեցին քրիստոնէութեան ճառագայթաւէտ լոյսը և Հայոց համար երկրորդ Լուսաւորիչ հանդիսացան :

Այժմ ի՞նչ արեց Քրիստոնէութիւնը Հայերիս համար . առաջին Լուսաւորիչների քարոզութիւնը , որ պտուղ բերեց երկրորդ Լուսաւորիչի ձեռքով , ի՞նչ հետեանք ունեցաւ . — Մեծ հետեանք . — Քրիստոնէութիւնը նախ՝ ազնուացրեց բարքը , ուղղեց վարքը , և Մեծն ներքեսի օրով հեթանոսութիւնը բոլորովին արմատախիլ անելով՝ անվթութեան արմատը վերցրեց Հայաստանից , Բորոտները , ստրուկները , ախտաժէտները այլ ևս չէին արհամարհվում . նոցա բնակութեան վայրերը այլ ևս մացառները և այրերը չէին . ունեցան առանձին բնակութիւն և առանձին հոգս ու ինամք . — Աղգակցական ինամութիւնները վերցուեցին . հեթանոսական ոճիրները , սովորութիւնները փոխուեցին . այնուհետև Հայոց աշխարհը մի բարբարոս ու վայրենի աշխարհի չէր նմանում . Հայերը վայրենիներ չէին , այլ քաղաքակիրթ աշխարհի քաղաքացիներ , երկրորդ՝ Քրիստոնէութեան շնորհիւ շինուեցին բազմաթիւ վանքեր և կազմակերպուեց եկեղեցական դասը , որը մեր պատմութեան մէջ ազգիս գոյութեան , գրականութեան ծննդեան , վերածնութեան ու գոյութեան , և քաղաքական գործերի կանոնաւոր դիրք ստանալու ամենամեծ սատարն հանդիսացաւ . Աւանքերի մէջ կենդրոնացաւ զանազան ժամանակներում զանազան երևոյթներով Հայոց մտաւոր կեանքի զարգացումը , իսկ եկեղեցականները եղան կրօնի և ազգի պաշտպաններ և առաջնորդներ . Երրորդ՝ Քրիստոնէութեան ծոցի մէջ Հայն ծնաւ կրօնի և Ազգութեան գաղափարի համար նա-

հատակներ, որոնք մեռնելով՝ պաշտպանեցին եկեղեցին և ազգութիւնը, թողլով միայն մեզ պարծանք և փառք և մեր յարատեւութեան ապաստան: Չորրորդ՝ Քրիստոնէութիւնն եղաւ առաջին պատճառ, որ հայերն ստիպուեցին վաղորօք գիր ստեղծել, որպէս զի Աւետարանի վարդապետութիւնը ժողովուրդը լսէ իւր բարբառով, և ի շնորհս մեծին Մեսրոպայ, գրերի գիւտից յետոյ՝ Քրիստոնէութեան գրեկում ունեցանք գրականութեան ոսկի և արծաթի դարեր իրանց պանծալի արդիւնքով, Հինգերորդ՝ Քրիստոնէական ջերմեռանդութիւնը շատ եկեղեցիների գեղեցիկ շինութեանը պատճառ դարձաւ, որով յառաջ գնաց ճարտարապետութիւնն ու քանդակագործութիւնը, որոնց տխուր աւերակները այսօր իսկ մեր աչքովք տեսնուածնք շատ տեղեր, Եւ վերջապէս, ինչո՞ւ մի մի թուել. — մինչդեռ դարաւոր փորձերն ու հանգամանքների կուտակութիւնը անհերքելի ապացոյց են թէ Հայը իւր եկեղեցուց դուրս կորցնումէ իւր գոյութիւնը, իբրև ազգային եկեղեցով ճանաչուած համայնքից դասալիք դք, և ճանաչվումէ այն անունով — որին յարած է: Պաղթական հայերը, որոնք զանազան ժամանակներում բռնութիւնից և հալածանքներից ստիպուած թողին հայրենի երկիրը և օտարութեան մէջ ապաստան փնտոցին՝ նոքա մնացին՝ որոնք անարատ պահեցին Ս. Թադէոսի և Ս. Բարդուղիմէոսի քարոզած հաւատը, որոնք չուբացան հայրենի Եկեղեցին, և ընդհակառակն, որոնք անհաւատարիմ գտնուեցին՝ — կորան:

Այսպիսի նշանաւոր, կեանքի խորհուրդ ունեցող մեծ հետեւանքների և բարիքների համար է եղել, որ մեր նախնիք վառուած երկնից և նորա սուրբ նահատակների սիրով, «Երկնից լուսով զարգարուած», Հայ ժողովրդին, ինչպէս ասումէ երգիչը, հրաւիրում էին Աստուծոյ տաճարը, ուր սուրբ սեղանի գիմաց, մեծ հանգիստով կատարում էին այդ մեծ բարերարների տօնը. մանաւանդ այն ժամանակ՝ երբ մեր Հայրենիքը վայելում էր խաղաղութիւն, երբ արքայական գայիտօնը և քահանայապետական գաւազանը մակաղումէին նորա որդուց խաղաղ կեանքի և Աւետարանի դալարիների մէջ, Բայց ի՞նչ մեր դժբաղդ Հայրենիքը միշտ չէ վայելել այդ բաղդը. Հայոց երկինքը աւելի մութ ամպերով է ծածկուած եղել քան պարզ, Աւրախութեան կարճատե հանգէսներից յետոյ, յաջորդել են միշտ տխուր ու սև օրեր, ուր Հայն համարձակ չէր կարող երգել. ուր նորա սրբութիւնները արհամարհվում էին օտարից. ուր նա ընդունակ էր դառնում միմիայն ողբի ձայներ հնչեցնելու. սակայն ի շնորհս ժամանակին, դարեւոր լուսութիւնից յետոյ կրկին զարթնում է ահա այդ ոգին, և մենք այսօր երախտապարտ հոգւով նուիրումենք մեր երախտագիտութեան զգացմունքները Ս. Թադէոսի և Ս. Բարդուղիմէոսի յիշատակին, Մի փոքրիկ ազգ իւր դարեւոր քնիքը զարթնումէ վերջապէս նոր հոգւով յառաջ գնալու, շրջապիլ զանազան արգելքներից, դա մի մեծ և մտիթարական երևոյթ

է ժեզ համար, և ցոյց է տալիս թէ Հայն ձգտումէ հետևել այն բոլորին, ինչ որ վսեմ, ազնիւ և գեղեցիկ է. կամենումէ երախտագէտ լինել իւր բարերարներին: Այսօր այսպէս պարզ, թերևս անշուք, մի յարկի տակ, մի խումբ անձինքների մէջ, իսկ վաղը աւելի ճոխ, աւելի շքեղ, ազատ օդի մէջ, ընդհանրութեամբ, առաքեալների տօնը առաքեալների ձեռքով կատարելու:

Ա. Լօր-նի Ուսանող
Կորիւն Ազրաշեան Մշեցի:

Գեղտ. 3. 1883
Ի ձեռնարան.

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

ՍԻՄՖԵՐՈՕՕԼԻՑ.

Մեկիտօպօլ կամ Խզլ-եան, Տարիկեան նահանգի քաղաքներից մէկն է. Սիմֆերոպօլից դէպ ի Լօղօվոյ գնալու (մօտ 8 ժամուայ) ճանապարհի վերայ, Երբեմն յետագէմ՝ բայց արդ շնորհիւ երկաթուղւոյ շատ յոռաջացած է, և վաճառակահանութիւնն էլ խիստ բանուկ է, կենսական պիտոյքն՝ բազմաթիւ ուրիշ քաղաքների հետ կարի մատչելի: Մեկիտօպօլում զանազան ազգերի թուում գտնվումէ նաև Հայոց ազգի փոքրիկ խումբ, որ բաղկացած է մօտ 40 ընտանիքից: Աւնի մի քահանայ և մի փոքրիկ անշուք աղօթատուն ընդարձակ բակով՝ քաղաքիս ամենազեղեցիկ տեղում: Այս տարի Հոկտեմբ. ամսոյ 15ին կատարուեց Մեծարգոյ Մահտեսի Աղա Աւետիս Ս. Խլէպնիքեանց բարեպաշտ անձին սեպհական ծախքով կառուցանելիք եկեղեցւոյ հիմնարկութեան օրհնութիւնը: Պ. Խլէպնիքեան առատաձեռն բարեգործութիւններով սկսեալ 1856 թ. մինչ ցօրս համարեա թէ չէ դագարեցրել իւր ջերմ և Աստուածահաճոյ նուէրները՝ Աստուծոյ սուրբ տաճարները զանազան զարդերով փառաւորեցնելու այլ և այլ քաղաքներում: Ինչպէս մի քանի տարի առաջ տեսնելով Սիմֆերոպօլի եկեղեցւոյ խաչկալի անշուք և հնոտի դրութիւնը, կանգնել տուեց իւր ծախքով նոր ոսկեզօծ մի խաչկալ սրբոց ութը գեղանկար պատկերներով Պ. Պետրոս Թօփալեանցի երեսփոխանութեան ժամանակ և նորա իսկ միջնորդութեամբ: այս վերջինի վերայ միայն ունեցաւ նա ծախք մօտ 1400 մանէթի. իսկ Սիմֆերոպօլի հին խաչկալը հաստատուեց Բահչէսարայի Հայոց Ս. եկեղեցու մէջ՝ ուր առաջ հասարակ սիւները, իրանց վերայ կպցրած լոկ թղթերով էին ծառայում խաչկալի: Նոյն եկեղեցւոյ վերանորոգութեան համար նուիրատու եղան Պ. Խաչատուր Պոյաճեանց ընծայելով մօտ 150 մանէթ, և Դշխուհի Տիկին Փոփովի ընծայելով